

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ

(ՔԱՂ. ՌԻԱԾ. Գ)



ՈՒՂ. ՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՓԱԼԱՅՈՍ ԲՈՒԶԱՆԴԱՑՈՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

—————

Ի՞նչպէս պէտք է բնմէհունուլ Բուզանդի նկարագիրը՝ Ջիրաւայ պատերազմին. (« Եթէ՞ սու Արշակ » թէ « Եթէ սու Աջակ » . « Թագ արքունի » նշանակում է « Ազգունակին այցի » . « Պատմունակաց » ուղղեի « Պատրունակաց », եւ այն):

150. Էջ 200. « Խակ թագաւորն Պարսից Շապոհ ... զայր հասանէր ամենայն զօրոց իւրովիք և տեղի պատերազմին ... խրախոյս բառնային աղաղակելով ամենայն զօրքն պատերազմիկը Հայոց համակ, զայս ասելով՝ երե առ Արշակ բազ : » — Աւզզ. « Երբ առ Արշակ բազ : » — Հայր Խողուած էին և սրտերնին լցուած Պարսից դէմ, որովհետեւ Շապոհ ստոր մատնութեամբ կալանաւորեց և յինուշն աբսուրեց Հայոց բաջ թագաւորին, որ իւր մեծ պակասութեանց հետ, ունէր և մեծազոյն կատարելութիւններ, որով վաստակել էր իւր ժողովրդեան համակրութիւնն և սէրը. ուստի և նրա դառն տառապանաց և գերութեան մորմորն նրանց սրտերից չէր անհետանում. մանաւանդ այն սազմիկ զօրաց, որ երկար տարիներ զինուորել էին նրա նշանի տակ և մեծամեծ յաղթութիւններ տարել էին Պարսից դէմ. ուրեմն այս ներկայ կոռում հայ հինաւորց զօրականներ չեն մոռանում իրանց Արշակ քաջը, որ անշուշտ արժանացել էր աշուշականն երգիրի որոց հետքը Բուզանդաց այս կոռիք մէջ նշանարուում է. (դիտ. էջ 20), սոող ԶՅ. զողցն ամէն մի տողն մի տան վերջաւորութիւն է « ին » ով մինչեւ

201 էջ « Արշակայ զոհ լվիր » . զոր օրինակ աճապարէին, աշխարհին (քանից) պատերազմին, էին, կործանէին, թագաւորին, բառնային, և այլն, և այլն : — Հայր ուրեմն երեց կերպիւ, առաջին՝ երբ իրենց ախոյեանը տապարում էին, իսկոյն աղաղաղակում. « Երբ առ Արշակ, պատմիր տեսածդ, մհզանից լուր տար՝ » հոգոցն էին ասում: Այլ եռիրամ էին իրանց բաջ թագաւորին, ասելով « առ Արշակ բաջ ». (ոչ եթէ իրբեւ նախզիր առ Արշակ բաջ). « ոչ եթէ իրբեւ նախզիր առ Արշակ բաջ : » (ոչ եթէ իրբեւ նախզիր առ Արշակ բաջ). և սորա էին ազատոց Հայոց՝ որ իրանց նիզակի ծայրն առնելով Պարսից զուխները, իրբեւ զետակ նետում էին իրանց՝ դէպ ի իրանց թագաւորը: Խակ երրորդը երբ զգեստելով ոչիարի պէս մորթում էին, կ'ասէին: « Արշակայ զոհ լվիր » : Շապոհ կըկնելով Հայ բաջերի խօսքերը (էջ 20) սոող 17): « Եթէ միւս եւս ընդ այս եմ զարմացեալ ... համակ ասէին՝ թէ առ Արշակ, և առ չէր ի մէջ նոցա »: Խնձ թուում է որ ըստ մեր մտաց ասում է, թէ առ, ընդունէ Արշակ. վասն զի պատմիչն աւելացնում է. « նա չէր ի մէջ նոցա »: բայց տիրասէր հայր կարծես երեւակայում էր Արշակայ ներկայութիւնը և նրա հետ

խօսում և ձեռքբրով զգետնում, նուիրում կամ զշում իւր ախոյեանը ցաջ թագաւորին, իրը սահելով պ՛ո, գոհացիր, վրէծդ հանեցինք: Խակ եթէ «առ» իրը հախադր: Ընդունինց՝ այն ատեն այդ խօսքերը կը կորցնեն իրանց կորովք և պատմական նշանակութիւնն և ոչ ի դէպ ուազմիկ հիմաւուրց և տիրասէր զօրականին, որ ասում էր Շապուհի նախանձը շարժելով: «Երանի որ Հայոց գնդին տէր իցէ, այնպիսի տիրասէր և միարան միամիտ զօրացն»:

151. Էջ 200. տող 17. «Տայց գուշակեալ իմ քեզ ... յանպատրաստից Ակն ի վերայ ցու »: — Աւող, «յանպատրաստից իմ ի վերայ ցու »: Աւոնայր զգուշացնում է Մուշեղին որ Շապուհ յանկարծակի նրա վրայ պիտի զայ, զեռ չէ եկել, որ կարող լինէր «Ակն ի վերայ ցու » ասել:

152. Էջ 198. տող 22. «Ես ոչ սպանից զայր թագաւոր, բէ կարի նեղ հասցէ ինձ »: կարծես թէ այն միտքն ունի որ եթէ նեղ տեղ ընկնամ, այն ատեն կարող կը լինիմ սպանանել. մինչ Մուշեղի միտքն է որ նեղ տեղ, ստիպուած ժամանակ է և ես թագաւորի վրայ ձեռք չեմ վերցնի. ուստի այդ վերջին իմաստն լրի ունենալու համար՝ պէտք է «և» շալդ. յաւելացնել և ուղղագրել. «թէ ե կարի նեղ հասցէ ինձ ». Նեղ այստեղ և այլուր հին զասական զրիչների մօտ չի նշանակում նեղ, զժուարին տեղ՝ այլ մահուան վտանգ, նյոն իսկ ստոյգ մահ: Մուշեղ ասել կ'ուզէ: եթէ ստոյգ գիտենամ որ մահ ինծի կը հասնի թագաւորի ձեռքով, եւ նորան չեմ սպանի: Ա. Գրոց թագաւորութիւնն է՝ թակորայ համար՝ թէ «հայրն ցո նեղեալ է »: արդ իսկ մեր ուամիկն սաստիկ վտանգաւոր կամ հոգեվարց հիւանդին կ'ասեն թէ «նեղած է, նեղն է »: այսինքն, մահամերձ է:

153. Էջ 200. «Զոր .. սպանանէին՝ նուիրէին իւրեանց ստոյի թագաւորին Արշակայ »: ուղղելի, թերեւա, քայի:

154. Էջ 204. տող 33. « Ապա զի էր ինցն Դղակն (Դղակն) այր մեծ և անձնեայ . . . մուծէք զդա ի տուն Պատմուանակոցն . . . այսինքն ուր բաց արբունի դնէր . . . և ոչ ի տան բագաց սպանանել, և զբ բազի . . . հրապարակին արցունի »: — Ուզգ. Պատրուանակոցն . . . (« այսինքն ուր թագ » յաւելուածն՝ է glossa եկամուտ):

— թագը է ոչ թագ արբայական, այլ՝ որթ, այզի խաղողոյ: Այս հասուածի մէջ Դղակի մի խօսք « ոչ ի տան թագաց սպանանել, և զբ թագի արեամբ շաղափել » մոլորեցրել է անհմուտ ընդորինակոդին « պատրուակաց » փոխել « պատմուանակաց » և յետոյ իրեւ glossa և բացատրութիւն իւր ներմուծած բառին յաւելուց, « այսինքն ուր թագ արցունի զնէին »: Մինչդեռ պատմութեան ընական ընթացքն, տեղական սովորութիւնն ու բառագիտութիւնը մեզի այլ եղրակացութեան են հասցնում: Այս տեղ ոչ մի խօսք չի կարող լինել ոչ թագաւորի պատմուանի և ոչ էլ արցունի թագի մասին . այլ միայն որսի տեղերի և որթի այզիների վերայ է խօսում Բուզանդ: Պատմութիւնը (Էջ 204. տող 4) ասում է որ Դղակի չար միտքը իմանալով Պապ առ ինքն է հրապիտում նրան և նա զալիս է և ներկայանում Պապայ « ի գաւառն Այրարատու, ի մեծ գիւղն Եկին արցունի, որում Արդեանս կոչէն »: Այսոր որ տեղ լինելը « ճշդի գտակաւու » չեմ կարող ասել, յամենայն զէպս Շահապիկանի պէս զուարճալի և հովասուն տեղ լինելու է, ուր թագաւորն սովորութիւն ունէր զնալ « քիֆ ցաշել » ու համար: Միայն մի մեծ գիւղ է, ուր այզիներ կան արբայապատկան, « գիւղն ընդին արցունի »: Այսպէս հասկնալու իրաւունք է տախի Բուզանդայ մի ընթերցանութիւնը (Էջ 97. տող 2). « Ա. Բասիլիոս . . . տեսանէր ի տեսլեան զի այզի մի էր . . . պատառէին բազում ունիս որթոյ . . . զդաշտն . . . և զբազուկ ընծովին »:

Ուրեմն Արդեանս « ունէր այզի մի մեծ և վայելուչ » ուր որթի տաշտեր և ունչեր կային, որոնցից խաղող էր կթուում և

պատրաստում էին արքունի զինիքը : Այսն-պէս և «թագ արքունի» նշանակում է ուղղակի «այզի» : Այժմ իսկ յԱյրաբատեան դաշտի այզոյ մշակողը, որթոյ տաշտին և տնկին բաղ են ասում որ լեզուական փոփոխութեամբ կրնայ նոյնանալ ընդ «թագ»ին : Բայց ոչ լոկ ենթադրութեամբ այլ իսկութեամբ կարեմք հաստատել . «թագ» պարսկերէն լեզուով նշանակում է, որթ, այզի : Ուրեմն Դիզակին սպանելու տանում էին այզոյ մէջ, որ տալիս է զինի ուրախութեան, սիրոյ, կենաց, և այլն . և նա ափսոսում է չչաղախել զինին իւր արեամբ «և զրո թազ արեամբ շաղախել» : Թագ կամ թազ (Բուզանդ զիտէ գեկ փոխել մրմեանց հետ) նոյնպէս զինի նշանակելու չեն հակասել . զոր օրինակ կանա Գալիւայ Հարսանիքին թիսուս կը հրամայէ «Եցէ զթակոյկալ ջրով», այսինքն զինոյ ամանները : Այսչափս կարծեմ բաւական է համոզել որ այսող «թագ արքունի» նշանակում է այզի որթոյ և ոչ թագ արքունական որ ի զլուփն զին : Անցնինք «պատուճակաց» բառին : Ասացինք որ նախնականն եղած է Պատրունակաց և «թագ» բառի շնորհիւ սիսալ սրբազրուել է : Դիզակի նման մի սպանութիւն է և տարաբաղդ Գնելոյն : Արշակ նոյնպէս Շահապիվան զիւզն էր, և կարգաբրում է Գնելայ մահը, զոր «առնուին զնային մօտ ի Սիւան արքունի . . . մօտ յորմածս արգելոցացն որսոյն էրէցոն» . . . բազմոցացն արքունի» : Եթէ համեմատենք այս Դիզակայ անցքերին՝ «փոխանակ Սիւան արքունի», ունինք թագն արքունի կամ տուն թագաց : Իսկ «մօտ յորմածս արգելոցաց որսոցն էրէցոն» . . . «մուծին զնաի ներքս ի տունն պատրուճակաց, կապել ձեռս յետո» ճիշդ իրերեւ անասուն մորթելու համար : Դիզակ հասկանալով թէ ի՞նչ անարգական մահ է գալիքը, դարձած առ թագաւորն ասում է . որ զիս հրապարակի վերայ պէտք էիր սպանանել և ոչ թէ ըշել այզոյ խորչերը որսի անասունների կամ ուկերի հետ մորթել և իմ արինով շաղախել այն հողը ուր թագաւորի հա-

մար որթեր տնկուած են : Աւելորդ եմ համարում կանգ առնել այն մտցի վերայ իր թէ այդ ետ ինկած գիւղում պահուում էին թագաւորի թանկագին թագն և բհէեցն ու ծիրանին : Վասն զի այդ թանկագին գանձերի տեղերն անառիկ բերդերն էին, «Անին, Արտագերց և Դարինար, Անգել», և այլն զորս յիշէ ինքն բուզանդ : Եղակացնում եմ . «Ծուն պատրուճակաց» է որսի կենդանիների կամ ուկերի և զառնուկների քաղաքորմն, որոնցից թագաւորի խորտիներ և խորովածներ էին պատրաստուում : Խակ «տուն թագաց» . է զընտան կամ զինոյ կարասների տեղը, մառանը ուր զինիներն էին պահուում կամ նոյն իսկ խաղողի որթերը, որոնցից պատրաստում էին թագաւորի համար զինի սեղանոյ և արքունի տաճարին :

Հ. ԳԱՐԵՒՆ ՆԱԶԱՊԵՏԱԿԱՆ
Հարայարելի

ՀԱՅՈՍԱԿԱՆ ՍՐԲՈՑՆՇԱՐՆԵՐԸ

(Եար. տե՛ս 1906, էջ 548)

Գ. ՀԱՅՈՑ ՔՈՎ : — Աւելորդ է խորհիւթէ հայ եկեղեցին իւր սկզբնաւորութենէն խակ կարենար տարրեր ընթացք մ'ունենալ այս մասին քան միւս եկեղեցիք : Դ-Ե զարուց մատենագրաց բազմութիւն մ'իրենց խառն վկայութեամբը լիուլի և մանրամասն կ'ապացուցանեն մեզ զայդ : Ագաթանգեղոս այսպէս զրել կու տայ Դիոկետիանոսի՝ իւր նամակին մէջ . ցրիստոնեայց «սպաննելոց սոկրերը կը պաշտեն» (ԺԴ), փոխանակ ցրիստոնէարար ըսելութէ կը մնեարեն : — Լուսաւորիչ Հոփիսիմեանց «երանելի մարմնոց արկդիրուն վրայ ընկած էր ծնրագիր, պաղատանք մատուցանելու» (անդ, ՃԵ) : — Յաճախապատում զիրքը նշխարաց հրաշագործ